պատշաճի. զի յիւրոց իրաւանց որպէս վի-
բաղոյնն ցուցաք, զքան և թողուցու, իւ-
րոյն գտանէ յանցանաց թողութիւն յար-
դարադատ ատեանն Աստուծոյ։ Ապա թէ
այր ընդ եղբաւր դատի, անդ ո՛չ է իրաւացի
առնել զզրմութիւն. զի այսու ոտնի նորա
լինի անիրաւութիւն. բայց թէ միջնորդ
հաշտութեան եղեալ համոզեսցէ զնոսա 'ի
խաղաղութիւն առանց շահելոյ ինչ 'ի նոցա-
նէ։ Եւ զի անկար է թագաւորաց զամենայն
իրս ինքեամբ վճարել, կացուցցեն դատաւորս
արդարակրօրէն՝ անաչառ բարուս ունել,
զոր որ ատիցեն զհպարտութիւն. և մի՛ զայն
միայն բաւական համարեսցին, 'ի նոսա ձը-
գել զխիղճ դատաստանին. և ապա կաշառ
ի վերայ իրաւանց առնլով և մեծապէս պա-
հանջմամբն 'ի դատաւորաց զինչն՝ հարկել
զնոսա յանիրաւութիւն։ Այլ կամ 'ի դա-
տաւորսն մի՛ ամենևին զել և զմուտ ընչեցն
յանձնել, այլ այլոց զնոցն հաւատալ, և
նոցա զբան իրաւանց և զդատաստանին մի-
այն հոգալ, և կամ կշռել զծախս իւրեանց
ի վերայ մտիցն իւրեանց, և թէ աւելի հարկ
հասցէ ինքեան, զիտութեամբ ամենեցուն
հաւասարաբար հանել յաշխարհէն, և ըզ-
նոցն 'ի պէտս հասարակաց հանել, և ոչ իւ-
րոյ անձին։

ՎԱՍՆ ՃՇՄԱՐՏԱՍԻՐՈՒԹԵԱՆ։ Պէտք բա-
նիս անհրաժեշտ ունել զբան խոստման և
զդրաւորական հրաման, սիրել զատուգու-
թիւն և ճշմարիտ լինել յամենայնի։ Զի
հրաման է Աստուծոյ լինել հաւատացելոցն
ի նա, այոն՝ այո՛, և ոչն՝ ո՛չ. մանաւանդ թա-
գաւորի՝ որոյ մի ինչ ատութիւն ասասցի 'ի
լեզուէ նորա. զի "մարգարէութիւն 'ի շբ-
թունս թագաւորի" ասէ Սողոմոն։ Եւ այս-
քան բաւականասցի յաղագս թագաւորի։

(Վերջ ի յետագայ ամսագիրն)։

Ի ՏՕՆԻ

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ի ԼԵՐԻՆՆ ԹԱՓՕՐ

Ե՛կ դու 'ի փող 'ի տարփող՝ լեառնդ Թափո՛ր, խրախ 'ի դէմ,
Ի լոյս շնորհաց, փթթեալ ծաղկանց՝ 'ի քո 'ի սուրբ 'ի հովտէն.
Ծաղկաստիւռ կատարք բլբացդ 'ի սուրբ ասնիս ողջունի,
Պատկ լուսոյ, կաղմ 'ի գագաթ, քոյին փնջեալ շողշողի։

Ուրախացի՛ր խորան լուսոյ, դստեր Մ՝օրդ Սիոնի,
Ցնծան 'ի քեզ այսօր որդիք՝ այրիացեալ Մասիսի.
Զ՝երդս կաղմեալ ազգի ազգի՝ եղանակաց հրճուանաց,
Ի սէր փառաց Հանդիսիդ՝ զերաշանցեալ 'ի մտաց։

Ահա փեսայդ նորաթագ, խանդաղակաթ սիրով դայ,
Պարօտ աեսայդ զեղեցիկ՝ հարբոյր ստեանց քոց ցանկայ.
Աշակերտաց ընդ երից՝ փեսաւորաց ալքայիդ,
ԳՀնաւորաց անդամոց՝ անմահ փառաց զրախտիդ։

Ընդ հովիտ քո ծաղկախիտ՝ Աստուածաճեմ եւանէ,
զԱստուածականքն յառաջ՝ զդարշապար զեւր մղէ.
Ի դաղաթ քո լուսավառ՝ հալմնարանիդ ժամանիլ,
Պայեալ 'ի մէջ պարտիզն՝ սէր օրհնիդ, սէր կոչէ։

Օ՜ալթիր՝ ով դու պճնազարդ՝ հարսն իմ սիրուն անմահն,
Քաղցրահայեաց՝ քո աչք՝ տես զսիրոյդ զփեսայն.
Պայծառափայլ պերճ փառք՝ յապուշ կրթեաց զամենայն,
Օ՜իւր սիրասուն աշակերտս՝ զքո յորսայսեալ, անդ անկան։

Այն ինչ հնչիւն սաստկաղին՝ յերկնից 'ի վայր թնդեցաւ,
Կամար լուսոյ հովանի՝ յերկինս 'ի վեր կապտեցաւ.
Յորսայսելոց 'ի վերայ՝ եղև բարբառ Աբարչին,
"Հաճեցարուք ընդ որդիդ՝ իմ սիրելին, միածին"։

Նորաքանչ զարդարեալ՝ Աստուածային սուրբ փառք,
Ի զլուխ լերին սրբութեան՝ ելեալ այսօր լոյս ամպովք,
Ի սուրբ խորհուրդ տաճարի՝ զտաղաւար յօրինել,
Աշակերտաց իւր ուսոյց՝ անդ 'ի լերինն 'ի յապշել։

Վեղ փեսայիդ անմահի՝ յօրինեսցուք տաղաւար,
Մի Մովսիսի ասացին՝ Եղիայի 'ի համար.
Ընդ Աստուծոյ ցանկացեալ՝ յարամեալ 'ի լերին,
Ընդ Աբարչին՝ ընդ սեղան՝ և փառակցիլ մշտաբար։

Նաւակատիս միշտ այսօր՝ պարտաւոր եմք կատարել,
Միահամուռ ժողովուրդք՝ տաղաւարաց տօն կազմել.
Ցնծալ փառօք 'ի ամին՝ մաքուր մաղթանս առխնկել,
Ի սուրբ սեղան Աստուծոյ՝ և անդադար միշտ օրհնել։

Դպրոցական աշակերտ. Գրիգոր Յ. մահտեսի Ադամեանց։

ի 27 Յուլիսի 1869 ամի
ի Նուխի։